## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2022 թվականի N 438-Ա

## «ԲՌՆԱԿՈԹԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ՀԱՅԱՐՓԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԱՐՈՒՍՅԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով, հիմք ընդունելով «Բռնակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի 2022 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի N 18 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացուցչի գրավոր եզրակացությունը՝

**ո ր ո շ ու մ  ե մ.**

1. «Բռնակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտրված տնօրեն Հայարփի Սահակյանի հետ 2022 թվականի նոյեմբերի 1-ից կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով:
2. Արուսյակ Գրիգորյանին 2022 թվականի նոյեմբերի 1-ից ազատել «Բռնակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:

31.10.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ — Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 31
ք. Կապան